Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

№ 1-19 առաջադրանքների հրահանգ. (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 միավոր) Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ՝ պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում՝ հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում: Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա ուղղել պատասխանն, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո միայն նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք:

(1) **1. Ո՞ր ճարտարապետների աշխատանքների բանաքաղության (կոմպիլյացիա) հիման վրա ստեղծված մեկնաբանությունն (ինտերպրետացիա) է ներկայացված նկարում:**

ա) Ֆրենկ Գերիի և Ֆրենկ Լլոյդ Ռայթի,

բ) Զահա Հադիդի և Յորն Ուդզոնի,

գ) Անտոնի Գաուդիի և Լը Կորբյուզիեի,

դ) Սանտյագո Կալատրավայի և Գուստավ Էյֆելի:

(1) **2. Ո՞րն է կոմպոզիտ (բաղադրյալ) օրդերին բնորոշ առանձնահատկությունը:**

ա) Սյունը տեղադրված է անմիջապես ստերեոբատի վրա,

բ) խոյակի զարդարանքն առանձնանում է ականթոսի տերևների և գալարազարդերի (վոլյուտա) սինթեզով,

գ) սյունը զանգվածային է, երկրաչափորեն խիստ և պարզունակ,

դ) սյունը զարդարված է խորը կանելյուրներով, իսկ խոյակը՝ գալարազարդերով (վոլյուտա):

(1) **3. Ո՞ր հնագույն պալատի բարձրաքանդակն է պատկերված լուսանկարում:**

ա) Նինվեում գտնվող Աշուրբանիպալի պալատի,

բ) Դուր-Շարրուքինում գտնվող Սարգոն Երկրորդի պալատի,

գ) Պերսեպոլիսում գտնվող Ապադանայի,

դ) Մարի քաղաքում գտնվող Զիմրիլիմ թագավորի պալատի:

(1) **4. Ո՞ր առանձնահատկությունը *<u>համապատասխան չէ</u>* Կոլիզեումին:**

ա) Կառույցի հատակագիծն էլիպսաձև է,

բ) հանդիսատեսի նստատեղերը բաժանված են չորս թատերահարկերի (յարուս),

գ) այն օրգանապես հարմարեցված է անհարթ լանդշաֆտին,

դ) թատերահարկերի (յարուս) տակ գտնվում են կամարակապ պատշգամբասրահներ:

(1) **5. Կոլիզեումում մշակված ո՞ր ճարտարապետական լուծումն է մինչ օրս օգտագործվում մարզադաշտերի շինարարության մեջ:**

ա) Արդյունավետ լոգիստիկայի տեսանկյունից մրցասպարեզի (արենա) տակ տարբեր նշանակության կայանատեղիների տեղադրումը,

բ) պատշգամբասրահների համակարգն ու բազմաթիվ ելքերը՝ որպես մարզադաշտն արագ դատարկելու միջոց,

գ) կամարների երեք շարքից և որմնասյուներից կազմված ճակատային մասը, ինչը որոշում է պատերի թեթևությունը,

դ) կամարների գլխին բարձրացված խուլ պատը՝ որպես պաշտպանիչ պատնեշ մրցասպարեզի և հանդիսատեսի միջև:

(1) **6. Անվանեք XVII դարի արևմտաեվրոպական արվեստի այն ոճը, որը թարգմանաբար նշանակում է «անհարթ մակերես» և բնութագրվում է դինամիզմով, դրամատիզմով և գույների ու լուսավորության հակադրությամբ:**

ա) Բարոկկո,

բ) Ռոկոկո,

գ) Ռոմանտիզմ,

դ) Ար-Նուվո:

(1) **7. Ո՞ր տեխնիկայով է ստեղծվել Ալբրեխտ Դյուրերի ներկայացված աշխատանքը:**

ա) Գրավյուրայի,

բ) յուղաներկի,

գ) գուաշի,

դ) տուշի:

(1) **8. Ո՞ր մշակույթի նկատմամբ հետաքրքրությունն է զգացվում Պիկասոյի ներկայացված նկարում:**



ա) Հնդկական,

բ) աֆրոամերիկյան,

գ) ճապոնական,

դ) միջնադարյան:

(1) **9. Ներկայացված նմուշներից ո՞րն է իմպրեսիոնիստական ոճի աշխատանք:**

ա)	բ)	գ)	դ)
			

(1) **10. Ո՞ր ձևակերպումն է վերաբերում իմպրեսիոնիզմին:**

ա) Մարդու նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրություն, նրա իդեալական, ընդհանրացված գեղարվեստական կերպարի ըմբռնումն ու արտացոլումը աշխատանքում,

բ) արագ փոփոխվող աշխարհում պահի անկրկնելիության, ռոպեական տեսողական տպավորության արտացոլում,

գ) դեֆորմացիա-ոճավորում, ձևերի չափազանցում, արտահայտչականության և հուզական ազդեցության ուժեղացում,

դ) երևույթի և առարկայի հիմնական էության, շրջապատող աշխարհի ընդհանուր, հավերժական վիճակի որոնում և արտացոլում աշխատանքում:

(1) **11. Նկարչության ներկայացված նմուշներից ո՞րն է պատկանում Լադո Գուդիաշվիլիի ստեղծագործականությանը:**

ա)	բ) 	գ)	դ) 

(1) **12. Շատրվանների ներկայացված նմուշներից ո՞րը *չի պատկանում* Ջովանի Լորենցո Բերնինիին:**

ա)	ց)	գ)	ք)

(1) **13. Ո՞րն է այն առանձնահատկությունը, որը մոտեցնում է ներկայացված նմուշը իտալական Վերածննդի բնութագրիչ հետ:**

ա) Լույս-ստվերով մոդելավորված ծավալային ձևերը,

բ) հստակ ուրվագծային նկարով ստեղծված խոսուն պայմանական պատկերներ,

գ) ֆիգուրի տեղադրումը ոչ թե պայմանական բնանկարի ֆոնին, այլ իրականին մոտեցած միջավայրում,

դ) պատկերների մանրամասնությունների մանրակրկիտ մշակումը:

(1) **14. Սահմանե՛ք տրված համապատասխանության տրամաբանությունը և որոշե՛ք, թե որ զույգն է անհամատեղելի:**

ա) Միքելանջելո Բուոնարոտի – Լորենցո Բերնինի,

բ) Ռաֆաելո Սանտի – Միքելանջելո Մերիզի դե Կարավաջո,

գ) Ջամբոլոնիա – Արտեմիզիա Ջենտիլեսկի,

դ) Լեոն Բատիստա Ալբերտի –Ֆրանչեսկո Բորրոմինի:

(1) **15. Ո՞ր քանդակագործներն են գործունեություն վարել Հին Հունաստանում ուշ դասականության դարաշրջանում:**

ա) Ֆիդիասը, Միրոնը, Պրաքսիտելեսը,

բ) Պրաքսիտելեսը, Սկոպասը, Լիսիպոսը,

գ) Ագեսանդրեսը, Լեոքարեսը, Ֆիդիասը,

դ) Միրոնը, Ֆիդիասը, Պոլիկլետոսը:

(1) **16. Թվարկվածներից ո՞րն է արտահայտում մոդեռնիզմի առանձնահատկությունը:**

ա) Գեղարվեստական ձևի լակոնիկություն ու պարզություն, արտահայտիչ ժեստիկուլյացիա և ուռճացված, պայմանական ձևեր, մշակման ազատ ոճ,

բ) ֆրոնտալ կերպով ծավալված, պայծար, տեկտոնիկորեն կառուցված ավարտուն կոմպոզիցիա, կատարման մանրակրկիտ գեղանկարչական եղանակ,

գ) կողք կողքի տեղադրված արագ, կարճ, անխառն, տարբեր գույների վրձնահարվածներ, շարժման և լույսի էֆեկտի ստեղծում,

դ) ուռճացված, խոսուն արտահայտչաձև, բարդ, անկյունագծային կոմպոզիցիոն կառուցվածք, ցայտուն կոնտրաստային (հակադրական) լուսավորություն:

(1) **17. Այս տեսակի ներկն ունի անզուգական գեղարվեստական առավելություններ: Դրանք հնարավոր է ինտենսիվորեն խառնել, շերտ առ շերտ քսել և փոփոխություններ կատարել պատկերի մշակման ընթացքում: Գույնը խորն ու հնչեղ է, մեղմ ու դիմացկուն: Դրանց միջոցով ստեղծվում են տարբեր բնույթի պատկերներ՝ հարթ մինչև պաստոզային:**

Ո՞ր ներկի մասին է խոսքը:

ա) Գուաշի,

բ) յուղաներկի,

գ) ջրաներկի,

դ) տեմպերայի:

(1) **18. Ներկայացված կոմպոզիցիայում ո՞ր հիմնական գեղարվեստական արտահայտչամիջոցն է գերակշռողը:**



ա) Գիծը,

բ) գույնը,

գ) ձևը,

դ) ֆակտուրան:

(1) **19. Ո՞ր հոսանքի նկարիչներն են շարժումը փոխանցելու համար օգտագործել այն հնարքը՝ որին դիմել է «Ալտամիրա» կտավի հեղինակը:**

ա) Էքսպրեսիոնիզմի,

բ) Իմպրեսիոնիզմի,

գ) Ֆուտուրիզմի,

դ) Դադաիզմի:

№ 20-25 առաջադրանք: ***«Ճիշտ է - Սխալ է»***

Առաջադրանքի հրահանգ. Ուշադիր ծանոթացե՛ք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճիշտ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրե՛ք ճիշտ ձևակերպումը:

Ցուցում. Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը կարող եք համապատասխանեցնել ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն: Հաշվի առեք, որ պատասխանը չի ընդունվի, եթե տրված բացատրության դրական ձևը փոխեք բացասականով կամ հակառակը:

Նմուշ.



(1) **20.** Բարոկկոյի ճարտարապետության հիմնական առանձնահատկությունը երկրաչափականությունն (գեոմետրիզմ) է, ուղղահայաց ու հորիզոնական գծերի գերիշխանությունը հարթության վրա և պարզ երկրաչափական ձևերը:

(1) 21. Ուղղանկյունաձև գեղարվեստական ստեղծագործությունը կոչվում է Տոնդո:

(1) **22.** Աբստրակցիոնիզմը կասկածի տակ դրեց արվեստի ավանդական բարձր արժեքները և հասարակության ուշադրությունը հրավիրեց արվեստի առնտրայնացման վրա:

(1) 23. Անտոնիո Գաուդիի կողմից ստեղծված *Սագրադա Ֆամիլիան* գոթական դարաշրջանի կարևորագույն տաճարներից մեկն է:

(1) **24.** Լուսավորությունը գեղանկարի ոչ միայն ձևը մոդելավորելու, այլ նաև տարածության պատրանք ստեղծելու միջոց է:

(1) **25. Արվեստի ներկայացված նմուշը կատարված է պաստելով:**



(7) **Առաջադրանք № 26.** ***Գործնական աշխատանք***

Հրահանգ.

Ընտրեք լուսանկարում ներկայացված երկրաչափական ձևերից ստեղծված քանդակի կառուցվածքը և պատկերեք դրա գրաֆիկական տարբերակը: Հաշվի առեք կոմպոզիցիոն բաշխման սկզբունքը, պահպանեք մանրամասնությունների համապատասխան համամասնությունները, լույսի և ստվերի հերթագայության միջոցով հաղորդեք դրանց ծավալ, ընկած ստվերը պատկերելիս որոշեք լուսավորության ուղղությունը: Առաջադրանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա:

Առաջադրանքներ № 27-29. ***Ժամանակագրության որոշում:***

Առաջադրանքի հրահանգ. Դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչներին, ճարտարապետության և կերպարվեստի նմուշներն՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Հաշվի առեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

(1) **27. Դասավորեք ներկայացված արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:**			
1.	2.	3.	4.

(1) **28. Դասավորեք ներկայացված արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:**			
1.	2.	3.	4. 

(1) **29. Դասավորեք ներկայացված արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:**			
1.	2.	3.	4.

(3) **Առաջադրանք № 30.** ***Համապատասխանության որոշում.*** Ա սյունակում ներկայացված Պիկասոյի աշխատանքներին համապատասխանեցրեք Բ սյունակում ներկայացված արվեստի գործերը, որոնք ոգեշնչման աղբյուր են հանդիսացել նկարչի համար: Հաշվի առեք, որ մեկ աշխատանքին համապատասխանում է միայն մեկ արվեստի գործ:

Ա. 1.



2.

3.

Բ. ա)

բ)



գ)

դ)

ե)



(3) **Առաջադրանք № 31.** ***Համապատասխանության որոշում.*** Բ սյունակում ներկայացված նկարները համապատասխանեցրեք Ա սյունակում ներկայացված ոճերին: Հաշվի առեք՝ մեկ ոճին համապատասխանում է միայն մեկ նկար:

Ա. 1. Պուանտիլիզմ	2. Ակադեմիզմ	3. Սիմվոլիզմ	
Բ. ա.	գ.	դ.	զ. 
է.			

Գրավոր առաջադրանքների հրահանգ

Ուշադիր ծանոթացե՛ք առաջադրանքներին և ըմբռնե՛ք դրանք:

Աշխատանքը կատարեք դյուրըմբռնելի ձեռագրով: Այն հատվածները, որոնք դժվար ընթեռնելի են, չեն ստուգվի և գնահատելիս չեն նկատառվի:

Գրավոր չորս աշխատանքներին կից ներկայացված են ցուցումներ: Այդ ցուցումներին պետք է պատասխանեք այնպես, որ աշխատանքն իմաստային տեսանկյունից լինի ամբողջական: Զերծ մնացեք հարցերին տրված մեխանիկական պատասխաններից:

Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Աշխատանքը կգնահատվի, նրանում դրսևորված փաստարկման (սեփական կարծիքն օրինակներով հիմնավորելու) և ինքնուրույն մտածելու ունակության համաձայն:

Դատողությունը պետք է լինի տրամաբանական, միտքը հասկանալի արտահայտված:

Տեղափոխեք աշխատանքը պատասխանների թերթիկի վրա:

Պատասխանների թերթիկում թույլ տրված սխալի վրա ուղղակի գիծ քաշեք, չի թույլատրվում առնել այն փակագծերի մեջ կամ խազմզել:

(4) Առաջադրանք № 32. Ներկայացված կոմպոզիցիաները հին հունական առասպելի գեղարվեստական մեկնաբանությունն են, որտեղ հստակություն են ձեռք բերում բովանդակային, գաղափարական և գեղարվեստական կերպարի բնույթի առանձնահատկությունները: Ընտրե՛ք չորս աշխատանքներից մեկը, վերլուծե՛ք և որոշե՛ք.

1.



2.

3.

4.

ա. Ո՞ր առասպելի մեկնաբանությունն է ստեղծել նկարիչը: Մտորեք ստեղծագործության բովանդակային և տեսողական համապատասխանության շուրջ:
բ. Նկարագրե՛ք ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունները և պարզաբանեք, թե օգնում են արդյոք դրանք փոխանցել գեղարվեստական կերպարի բնույթը: Ստեղծագործությունը համապատասխանեցրեք դարաշրջանին: Ձեր պատասխանները հիմնավորեք փաստարկներով:

(15) **Առաջադրանք № 33. Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն:**
Ընտրե՛ք, վերլուծե՛ք և գնահատե՛ք ստորև ներկայացված արվեստի նմուշը:

Կատարե՛ք առաջադրանքն, ըստ ցուցումների.

(3) **33.1** Նկարագրե՛ք և բնութագրե՛ք նկարը: Ո՞ր ժանրին է պատկանում ներկայացված կոմպոզիցիան: Հիմնվելով նյութի և տեխնիկայի վրա՝ որոշե՛ք, թե արվեստի որ ճյուղի նմուշն է ներկայացված:

(3) **33.2** Վերլուծե՛ք և համառոտ ձևակերպե՛ք, թե պատկերավորման ինչ արտահայտչամիջոցներ ու հնարքներ է կիրառում հեղինակը նկարում գեղարվեստական կերպարի բնույթ ստեղծելու համար:

(3) **33.3** Գեղարվեստաոճական բնութագրիչների հիման վրա որոշե՛ք հոսանքը, որոշե՛ք, թե որ երկրի և դարաշրջանի արվեստի նմուշ է ներկայացված, նշե՛ք հեղինակի անունը:

(3) **33.4** Գնահատե՛ք աշխատանքը՝ արտահայտե՛ք Ձեր վերաբերմունքը, մտորե՛ք և հիմնավորե՛ք Ձեր կարծիքը:

(3) **33.5** Դատողություններ արե՛ք ազդեցությունների շուրջ: Դիտարկեք ստեղծագործությունը պատմամշակութային և այլ համատեքստում: